Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 3

<<ԳՔԵՍՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/2>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստի

ք. Գյումրի <<10>> մայիս 2019թ.
Ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչատրյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Հակոբյանը, Ա. Հովհաննիսյանը, Հ. Սահակյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Աղաբեկյանը

1. Գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման մասին:

1.1 Ա/Ձ Մարգարիտ Արծրունյանի և <<Նորմա-Քարտ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ Ա/Ձ Մարգարիտ Արծրունյանը և <<Նորմա-Քարտ>> ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չեն ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

1.2 Գնահատող հանձնաժողովը մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը գնահատեց բավարար և որոշեց թիվ 1, 3, 4, 6, 8, 10, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 23, 24, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 36, 37, 38, 42, 43, 45, 46 չափաբաժինների մասերով հաղթող մասնակից ճանաչել Ա/Ձ Մարգարիտ Արծրունյանին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.3 Գնահատող հանձնաժողովը մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը գնահատեց բավարար և որոշեց թիվ 2, 5, 7, 9, 11, 12, 13, 14, 22, 25, 34, 35, 39, 40, 41, 44 չափաբաժինների մասերով հաղթող մասնակից ճանաչել <<Նորմա-Քարտ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.4 Գնահատող հանձնաժողովը հաստատեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը: Անգործության ժամկետի սկիզբ սահմանվեց 2019 թվականի մայիսի 11-ը, ավարտը՝ 2019 թվականի մայիսի 15-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.5 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, գնահատող հանձնաժողովը որոշեց ծանուցել Ա/Ձ Մարգարիտ Արծրունյանին և <<Նորմա-Քարտ>> ՍՊԸ-ին՝ որպես ընտրված (հաղթող) մասնակիցներ ճանաչվելու և անգործության ժամկետի վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.6 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.7 Գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պայմանագրեր կնքելուն հաջորդող օրը, ժամը 14:00-ին, <<Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն>> ՊՈԱԿ-ի շենքում, որը գտնվում է ք. Գյումրի, Տերյան 6գ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Խաչատրյան

Անդամներ՝ _____ Մ. Հակոբյան

_____ Ա. Հովհաննիսյան

_____ Հ. Սահակյան

Քարտուղար՝ _____ Ս. Աղաբեկյան